ԴՊՐՈՑԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՐԴԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ …… 3

1. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՊԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ …… 3

2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ…… 6

3. ԴՊՐՈՑԻ ՄՈՒՏՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ…… 9

4. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋԱՆՑՔՆԵՐԻ ՊԱՏԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ…… 10

5. ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ…… 12

6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ …… 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի դերը մեծ է և կարևոր յուրաքանչյուր երեխայի կյանքում, քանի որ դպրոց հաճախելու տարիներին է զարգանում և ձևավորվում են երեխայի աշխարհընկալումը, ընդհանուր մտավոր և հոգեսոցիալական ոլորտները: Այս առումով շատ կարևոր է ուշադրություն դարձնել ընդհանուր շրջակա միջավայրին, որն իր ուղիղ ազդեցությունն է ունենում երեխաների զարգացման և ձևավորման վրա: Հարկ է հաշվի առնել, որ դպրոցի միջավայրը նպաստում է երեխայի ինքնության և շրջակա միջավայրի մասին նրա պատկերացումների ձևավորմանը և ամրապնդմանը (UNICEF, 2006):

«Երեխային հարմար դպրոց» ձեռնարկը, որը ստեղծվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից 2005-2006թթ., անդրադառնում է դպրոցական միջավայրի հիմնական չափանիշներին և առաջարկում համապատասխանեցնել դպրոցները՝ ստեղծելով յուրաքանչյուր երեխայի ներուժը լիարժեք բացահայտելու համար անհրաժեշտ միջավայր:

Մի շարք հետազոտություններ փաստում են, որ դպրոցում երեխաների կրթական արդյունքների և ուսուցիչների աշխատանքի որակի վրա իրենց ազդեցությունն են ունենում միջավայրային գործոնները և պայմանները, իսկ դպրոցական հարմարությունների որակի մակարդակը իր հերթին ազդում է ողջ ուսումնական միջավայրի որակի վրա: Այսպիսով՝ դասարանի և կրթական համակարգի նպատակը ոչ միայն ակադեմիական առարկաների վերաբերյալ գիտելիքների փոխանցումն է, այլև աշակերտներին հաճելի և բաց միջավայրում ուսուցանելը (Medium, 2024):

Վերջիվերջո, դպրոցական միջավայրում ամենակարևորն է օգնել երեխաներին դպրոցը և դասարանը տեսնել որպես իրենց պատկանող տարածք, մի վայր, որտեղ հանդիպում են ակադեմիական գիտելիքները, ազատությունը, ստեղծագործական աշխատանքը, զգայություններն ու գործողությունները:

1. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՏԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՊԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցի միջավայրը և ձևավորումը էապես ազդում են կրթական գործընթացի և սովորողների առաջադիմության վրա: Այս եզրահանգումը հանդիսանում է տարբեր երկրներում իրականացված հետազոտությունների արդյունքը, որոնցից թերևս առավել ամբողջական և համակարգված հետազոտությունը կոչվում է The Holistic Evidence and Design (HEAD), որն իրականացվել է Մեծ Բրիտանիայի 27 դպրոցների 153 դասարանների 3766 սովորողների շրջանում՝ նպատակ ունենալով պարզել դասարանի ձևավորման և ֆիզիկական միջավայրի ազդեցությունը առաջադիմության վրա[1]:

Հետազոտության հիմքում ընկած մոդելը հիմնվում է երեք բաղադրիչների վրա.

1. **Բնականություն.** դասարանի լուսավորությունը, աղմուկը կամ ձայնը[2], ջերմաստիճանը, օդի որակը և կապը բնության հետ (ազդում է առաջադիմության վրա շուրջ 49 տոկոսով),

[1] The impact of classroom design on pupils' learning: Final results of a holistic, multi-level analysis; Peter Barret, Fay Davies, Yufan Zhang, Lucinda Barret; Building and Environment, 89(2015), 118-133; The Holistic Impact of Classroom Spaces on Learning in Specific Subjects; Environment and Behaviour, 2017 May 49(4); 425-451

[2] 1997 թվականի մի հետազոտությամբ Շվեդիայում 12-14 տարեկան սովորողներին ընթերցանության նյութ էին տվել՝ յուրաքանչյուր խմբի համար նախապես ձայնագրված հետևյալ ձայների առկայությամբ՝ օդանավակայանին բնորոշ ձայներ, ճանապարհային երթևեկության ձայներ, գնացքներով երթևեկության բնորոշ ձայներ, խոսակցություն կամ առանց որևէ ձայնի ուղեկցության: Ամենաբացասական ազդեցությունը գրանցվել է ճանապարհային երթևեկության ձայների և օդանավակայանին բնորոշ ձայների ժամանակ, այն պարագայում, երբ գնացքների կամ խոսակցության ազդեցությունը այդքան զգալի չի եղել: Դասարանում ձայնի առկայությունը հատկապես լուրջ խնդիր է ուշադրությունը կենտրոնացնելու խնդիր ունեցող սովորողների համար:

2. **Անհատականացումը.** սովորողի և դասարանի կողմից պատկանելության կամ սեփականատիրական զգացողությունը դասարանի ֆիզիկական տարածքի նկատմամբ (կահույքի հարմարավետությունը, պատերի ձևավորումը, անվտանգության զգացողությունը, և այլն), ճկունությունը (տարբեր մանկավարժություն կամ մեթոդներ կիրառելու հնարավորությունը) ու կապվածությունը (ինչքանով է տվյալ դասարանը հեշտ կապվում դպրոցի մնացած տարածքների հետ, օրինակ՝ միջանցք դուրս գալը, սանհանգույցից օգտվելը և այլն) (ազդում է առաջադիմության վրա շուրջ 28 տոկոսով),
3. **Խթանումը.** գույնը և ձևավորման բարդությունը (ինչքանով են դասարանի տարբեր իրեր կամ օբյեկտներ համահունչ և համադրելի, ձևավորում մեկ ամբողջական պատկեր կամ ստեղծում քաոսի կամ միմյանց հետ չկապվածության պատկեր) (ազդում է առաջադիմության վրա շուրջ 23 տոկոսով)։

Այս բաղադրիչներից ելնելով՝ իրականացվել է հետազոտությունը և կառուցվել միջավայրից կախված վարքականոնի ձևավորման մոդելը։ Համաձայն հավաքագրված հետազոտական տվյալների՝ առաջադիմության վրա ամենամեծ ազդեցությունն ունենում է դասարանի լուսավորությունը։ Ընդ որում, լուսավորության լավագույն համադրությունը ցերեկային լույսի առկայությունն է՝ ըստ անհրաժեշտության էլեկտրական լույսի հնարավորությամբ, բայց ոչ արևի ուղիղ ճառագայթների պարագայում։ Այն պարագայում, երբ արևի ճառագայթներն ուղիղ ընկնում են դասարանի վրա, դա շլացնում է։ Երեխաների առաջադիմությունը զգալի բարելավվում է օդափոխվող սենյակներում, երբ ջերմաստիճանը ոչ շատ բարձր է։ Անհատականացման բոլոր երեք ցուցիչներն էլ էապես ազդում են առաջադիմության վրա։ Ավելի բարձր տարիքի երեխաների առաջադիմության վրա դրական են ազդում ավելի ընդարձակ և պարզ տարածքները, փոքր տարիքի երեխաների համար ավելի ազդեցիկ են բազմաշերտ պլանավորմամբ տարածքները, որտեղ կահույքն էլ դասավորված է ավելի մեծ բազմազանությամբ կամ գոտիներով, իսկ խթանման պարագայում առավել մեծ ազդեցություն է գրանցվում միջին պարամետրերի դեպքում, այսինքն, օրինակ, չափից շատ գույները կամ բոլոր օբյեկտների ամբողջական համադրվածությունը առավել վատ են ազդում առաջադիմության վրա, քան առավել սովորական ընկալվող ձևավորումները։ Գույներից առաջադիմության վրա առավել դրական ազդեցություն են թողնում լուսավոր և բաց գույները, սակայն կարևոր է նաև, որ պատերից գոնե որևէ մեկը ձևավորված լինի պատկերներով կամ պաստառներով։

Հանրային կարծրատիպերի հաղթահարում։ Հետազոտությունները ցույց են տալիս, որ դպրոցական պատերի ձևավորումը կարող է ուղղակի ազդեցություն ունենալ առկա հանրային կարծրատիպերի ամրապնդման կամ դրանց հաղթահարման համար։ Մասնավորապես, կանանց խրախուսման տեսանկյունից հետաքրքիր են հետևյալ հետազոտությունների արդյունքները. փորձ է արվել սովորողների ելույթների ժամանակ դասասենյակում նրանց դիմաց պատին տեղադրել տղամարդ հանրային գործչի նկար, որևէ նկար չտեղադրել կամ տեղադրել կին հանրային գործչի կերպար։ Այն պարագայում, երբ որևէ նկար չկար կամ տեղադրված էր տղամարդ հանրային գործչի կերպար, արական սեռի սովորողները իրենց աշխատանքները ներկայացրել են շատ ավելի երկար, շատ ավելի վստահ խոսք են ունեցել, քան իգական սեռի սովորողները։ Երբ պատին եղել է կին հանրային գործչի նկար, իգական սեռի սովորողների խոսքի վստահությունը, ուժը և երկարությունը զգալիորեն ավելացել է այն պարագայում, երբ տղաների մոտ բացասական ազդեցություն չի գրանցվել։ Համանման արդյունքներ են գրանցվել նաև դասագրքերի փորձարկման ժամանակ. օրինակ՝ աղջիկները քիմիայից ավելի լավ արդյունք են գրանցել, երբ գրքերում նաև կին գիտնականների նկարներ են եղել։

Միաժամանակ, հետաքրքիր ազդեցություն է գրանցվել տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցանման ժամանակ։ Երբ նման դասասենյակները ձևավորված են վիրտուալ խաղերի կամ այդ տրամաբանությամբ նկարահանված ֆիլմերի նկարներով, աղջիկները իրենց շատ ավելի անվստահ են

զգում, նրանք ավելի խրախուսված են առաջ գնալու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, երբ ձևավորումը դուրս է տեխնոլոգիական կարծրատիպային պատկերներից։

Նմանատիպ ազդեցություն է գրանցվում, օրինակ, հաշմանդամություն ունեցող սովորողների խրախուսման համար, որոնց դեպքում նույնպես օրինակը, վարքային մոդելը և դրա ցուցադրումը պատերի ձևավորման ժամանակ կարող է էական դեր խաղալ։

Ամեն դեպքում, պետք է հաշվի առնել, որ այս հարցում խիստ կարևոր է ճիշտ հավասարակշռության պահպանումը, որպեսզի մի սոցիալական խմբի խրախուսումը չբերի մյուսի առաջընթացի արգելակմանը, ինչը կարող է լինել, եթե ձևավորումը ուղղված լինի միայն մի խմբի։

Ուշադրության կենտրոնացում և ճանաչողական հմտություններ։ Հետազոտությունները ցույց են տալիս, որ նախադպրոցական և տարրական դասարանների տարիքի երեխաների համար պատերի ձևավորումը կարող է ուշադրությունը շեղող և սովորելուն խանգարող հանգամանք դառնալ[3]։ Հատկապես հաշվի պիտի առնել այն հանգամանքը, որ տարրական դասարանների սովորողները, ի տարբերություն բարձր դասարանների սովորողների, որ կարող են ամեն դաս պարապել այդ դասի համար նախատեսված կաբինետում կամ լաբորատորիայում, իրենց բոլոր դասերն անցկացնում են հիմնականում նույն դասասենյակում և զգալիորեն ավելի շատ ժամանակ են գտնվում նույն դասարանում։ Հետևաբար պատերի ձևավորումը նրանց վրա ունենում է ավելի զգալի ազդեցություն։ Իրականացված տարբեր հետազոտություններ ցույց են տալիս, որ այս տարիքի երեխաների դասասենյակների պատերը պետք է ձևավորված լինեն խիստ սահմանափակ՝ ուշադրություն չշեղելու և դասի վրա կենտրոնանալու հնարավորություն ստեղծելու համար։ Ավելի բարձր տարիքի երեխաների համար պատերի ձևավորման հետևանքով ուշադրության շեղման հավանականությունը ավելի փոքր է։ Բացի ուշադրությունը շեղելուց՝ պատերի չափից դուրս շատ ձևավորումը այդպիսով ուղիղ ազդեցություն է թողնում առաջադիմության վրա՝ նվազեցնելով ճանաչողական հմտությունները[4]։ Ընդ որում, հետազոտությունները ցույց են տալիս, որ սովորողները «չեն սովորում» պատերի ձևավորմանը. եթե այդ ձևավորումը շեղում է նրանց ուշադրությունը և խանգարում սովորել, ապա այդ ազդեցությունը գրանցվում է թե՛ այդ սենյակում սովորելու առաջին շաբաթում, թե՛ տասնհինգերորդ շաբաթում։

Մասնակցայնություն և պատկանելիության զգացում։ Հետազոտությունները ցույց են տալիս, որ սովորողների վրա պատերի ձևավորման դրական ազդեցությունը ավելի մեծ է, եթե նրանք իրենց առնչված են զգում այդ բովանդակությանը, ինչպես նաև մասնակցություն են ունենում պատերի ձևավորմանը, օրինակ՝ պատերին տեղադրված են իրենց մասնակցությամբ միջոցառումների նկարներ, իրենց պատրաստած պաստառներ կամ աշխատանքներ։ Ընդ որում, դրանք կարող են պարբերաբար փոխվել՝ թարմություն մտցնելով միջավայրում։

Նոր տեխնոլոգիաներ։ Դպրոցների կառուցման ժամանակակից տեխնոլոգիաների մեջ առանձնանում է գրվող պատերի մոտեցումը, որը թույլ է տալիս դասասենյակում ունենալ ոչ թե գրատախտակ, այլ պատեր, որոնց վրա կարելի է գրել։ Դրանով իսկ դուրս է գալիս գրատախտակի մոտ գնալու և գրատախտակին գրելու դասական մոտեցումը, որը փոխարինվում է ավելի ազատ ու ստեղծագործ միջավայր ստանալու մոտեցմամբ։ Նշված մոտեցումը կարող է ավելի կիրառելի լինել փորձարկման համար մասնագիտացված դպրոցներում կամ ավագ դասարաններում։ Կան տեսակետներ, որ այս մոտեցմամբ հնարավոր է խրախուսել նաև բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողների կարողությունների զարգացումը։

Բազմազանության և ստանդարտացման հավասարակշռումը։ Միասնականացնելով դպրոցների պատերի ձևավորման քաղաքականությունը՝ կարևոր է ընդգծել, որ դպրոցների՝ ստեղծագործ միջավայր

[3] Visual Environment, Attention Allocation and Learning in Young Children: When Too Much of a Good Thing May Be Bad. Anna Fisher, Karrie Godwin, Howard Seltman, Psychological Science, May, 2014,

[4] When visual stimulation of the surrounding environment affects children's cognitive performance. Pedro Rodrigues, Josefa Pandeirada, Journal of Experimental Child Psychology, Volume 176, December, 2018, Pages 140-149

լինելու նախապայման է ազատությունն ու ճկունությունը, հետևաբար միասնական չափանիշներ սահմանելով՝ կարևոր է ընձեռել նաև դրա սահմաններում ճկունության հնարավորություն՝ ամեն դպրոցի սեփական դիմագիծը ունենալու նպատակով, որը նպաստում է նաև յուրաքանչյուր սովորողի ինքնատիպության, սեփական կարծիքի ձևավորման մոտեցումների ամրապնդմանը:

2. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Դպրոցի ձևավորման ընթացքում հարկ է ուշադրություն դարձնել հետևյալ կարևոր հանգամանքներին.

Ձևավորման բովանդակությունը: Դպրոցական պատերի ձևավորման տրամաբանությունը պետք է **ամբողջությամբ համահունչ** լինի հանրակրթության պետական չափորոշչին և դրանով ամրագրված ութ հիմնական կարողունակություններին (կոմպետենցիաներին): Հանրակրթության պետական չափորոշչին հակասող ուղերձներ պարունակող էլեկտրոնային էկրաններն ու ձևավորումը պետք է բացառվի:

Ձևավորման լեզուն: Դպրոցական պատերի ձևավորման լեզուն բացառապես հայերենն է: Օտարալեզու պաստառներ կարող են օգտագործվել միայն օտար լեզուների ուսուցման դասասենյակում, եթե նման դասասենյակ առանձնացված է դպրոցում կամ դասարանում՝ օտար լեզվի ուսուցման ժամանակ՝ դասաժամի ընթացքում:

Երեխան առաջին տպավորությունը ստանում է, երբ մուտք է գործում դպրոց: Հետևաբար շատ կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել դպրոցի մուտքին և միջավայրային պայմաններին: Յուրաքանչյուր դետալ պետք է հաշվարկված լինի և համապատասխանի երեխայի ընկալմանը: Դպրոցի պատերը պետք է զուրկ լինեն մռայլ, մուգ, տխուր պատկերներից և պատկերազարդումներից, քանի որ վերջիններս ոչ այդքան ճանաչողական նշանակություն ունեն, որքան դեմոտիվացնող: Դպրոցի պատերը պետք է նպաստեն երեխայի մոտ սովորելու դրական տրամադրության և մոտիվացիայի ձևավորմանը:

Այժմյան պահանջներին զուգահեռ՝ պարզապես ներկված կամ սպիտակեցված պատերը արդեն իսկ կորցրել են իրենց արդիականությունը և անհրաժեշտությունը: Կրթությանը վերաբերող ժամանակակից պահանջները կարևորում են ցանկացած նրբություն և մանրուք, որն առնչություն ունի կրթական միջավայրի հետ: Դասասենյակի կամ միջանցքի պատի տարածքը կարող է օգտագործվել ուսումնական հաստատության տարբեր խնդիրներ լուծելու նպատակով՝ ճանաչողական, զգայական, գեղագիտական, ներկայացուցչական, մեթոդական և այլն: Գեղեցիկ, ներդաշնակ գույներով ձևավորված տարածքում գտնվելը հարմարավետ է և՛ աշակերտների, և՛ ուսուցիչների համար: Սա նշանակում է, որ ուսուցման գործընթացը կարող է ավելի հաճելի և արդյունավետ լինել բոլորի համար, իսկ դպրոցը՝ ցանկալի և սպասելի իրադարձություն յուրաքանչյուր երեխայի համար՝ կյանքի յուրաքանչյուր օր: Այս նպատակին ծառայելու համար այսօրվա դպրոցի յուրաքանչյուր անկյուն պետք է կրթական նշանակություն ունենա, իսկ ժամանակակից գունային լուծումներն ու գրաֆիկական գեղանկարչությունն իրենց ուրույն տեղն ունենան դպրոցի ձևավորման մեջ:

21-րդ դարի դպրոցներն ընդգրկում են ճկուն ուսումնական տարածքներ, իսկ պատերը դառնում են ստեղծագործական, համագործակցության և կրթական տարբեր կարիքներ ունեցող աշակերտների ներգրավվածության խթանման գործիքներ: Ստորև ներկայացվում են դպրոցի պատերի վերաբերյալ մի քանի հիմնական նկատառումներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակակից ուսումնական միջավայր կառուցելիս.

Ֆունկցիոնալություն (ճկունություն, տեխնոլոգիաների ինտեգրում, պահպանում): Դպրոցի պատերը պետք է հարմարեցված լինեն տարբեր տիպի ուսումնական գործունեության համար: Անհրաժեշտ է հաշվի առնել շարժական պատերը կամ միջնորմները, գրատախտակները, որոնք կարող են պատի դեր տանել, կամ առկա պատերի վրա գրելու հնարավորություն տվող մակերեսները (HMC

Architects, 2018): Պատերի մեջ պետք է ներկառուցված կամ ինտեգրված լինեն տեսացրիչներ կամ ինտերակտիվ էկրաններ, դարակներ կամ պահարաններ, որոնք կարող են ապահովել ուսումնական նյութերի պահեստավորումը և միևնույն ժամանակ կստեղծեն ավելի կազմակերպված միջավայր:

Մթնոլորտ: Դպրոցի պատերը հնարավորինս շատ պետք է լուսավորվեն բնական լույսով, այս իսկ պատճառով անհրաժեշտ է առավելագույնի հասցնել բնական լույսի մուտքը պատուհանների միջոցով և ճիշտ հաշվարկով տեղակայել հայելիները՝ հնարավորինս լուսավոր միջավայր ունենալու համար (Meteor Education, 2024): Դպրոցի ընդհանուր հարդարման մեջ պետք է հատուկ տեղ ունենան բնությունը և բնության տարրերը, օրինակ՝ բույսերի առկայությունը, հանգստի գոտում բնության ձայների առկայությունը, բնական հանգստացնող գույներն ու պատկերները և այլն: Դպրոցում առկա ձայնի մակարդակը պետք է կառավարելի լինի, ուստի շինարարական աշխատանքների համար առաջնային պայման է ձայնամեկուսացումը և գրագետ ակուստիկայի ապահովումը:

Ուսուցում և ոգեշնչում: Ցուցահանդեսների և տարբեր միջոցառումների համար դպրոցի պատերը կարող են հագեցվել մետաղյա ձողերով, որոնց վրա ողջ ուսումնական տարվա ընթացքում հնարավոր կլինի կազմակերպել տարբեր ցուցադրություններ, համագործակցային և նախագծային աշխատանքների ժամանակ փակցնել տարբեր նյութեր, գեղարվեստական լուսանկարներ, գծանկարներ, կոլաժներ, ոգեշնչող մեջբերումները, պատմական ժամանակացույցներ, ինտերակտիվ ուսումնական նյութեր և այլն:

Համագործակցային տարածքներ: Ժամանակակից դպրոցները հրաժարվում են «Ես սովորեցնում եմ, դու լսի՛ր» ուսուցման մոդելից և դառնում շատ ավելի համագործակցային և ինտերակտիվ: Արդյունքում դպրոցի ներսում անհրաժեշտ են այնպիսի տարածքներ, որոնք թույլ են տալիս իրականացնել տարբեր տիպի գործունեություն, ինչպես օրինակ՝ մեծ խմբերում խնդիրների լուծում, փոքր խմբերում գրքերի քննարկում, նախագծերի ներկայացում, կլոր սեղաններ, փոքր բեմադրություններ և այլն: Այստեղ կարևոր է շարժական՝ տրանսֆորմեր կահույքի առկայությունը, մեծ պատերի վրա գրելու և նկարելու հնարավորությունը, ծալովի միջնորմների առկայությունը:

Տրանսֆորմեր (ճկուն) կահույքի առկայություն: Համագործակցային տարածքները պահանջում են դասասենյակի նորարարական կահավորում, որն աջակցում է ակտիվ ուսուցմանը և թիմային աշխատանքին: Ժամանակակից գրասեղանները, որոնք նախագծված են առանձին ձուլակտորների վրա և ունեն անիվներ, հեշտությամբ դասավորվում են ինչպես խմբային, այնպես էլ անհատական աշխատանքի համար և կարող են մի կողմ քաշվել՝ հավաքվել՝ տարածքն ամբողջությամբ ազատելու համար: Գրելու համար նախատեսված մակերեսով գրասեղանները և սեղանները հնարավորություն են տալիս երեխաներին ազատ գրել, նկարել, ստեղծագործել, կոտրել կարծրատիպեր և զարգացնել ստեղծագործականությունն ու համարձակությունը:

Բնական լուսավորություն: Համաձայն նորագույն հետազոտությունների արդյունքների՝ լավ և ճիշտ լուսավորությունը, որը համադրվում է պատերի վառ գույների հետ, բարելավում է երեխայի մարմնի ընդհանուր վիճակը և ինքնազգացողությունը, ինչն ուղիղ ազդեցություն է ունենում ընդհանուր կատարողականի՝ երեխայի ուսումնառության որակի վրա: Ուստի կարևոր է, որ ինչպես դպրոցի մուտքը, այնպես էլ դասասենյակները հագեցված լինեն ճիշտ և գրագետ լուսավորվածությամբ:

Դպրոցներում չպետք է լինեն փոքր պատուհաններ և ցածր առաստաղներ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ երեխաներն ավելի լավ են սովորում այն տարածքներում, որտեղ բնական լույս է: Դպրոցական միջավայրի դիզայնի առանձնահատկությունները, ինչպիսիք են մեծ պատուհանները և լայն բացվող, ծալվող արտաքին դռները, վերացնում են ներսի և դրսի միջև գիծը: Պատուհաններից կամ դուռ-պատուհանից երեխան պետք է տեսնի բնությունը, և բացելով վերջիններս՝ երեխան կձուլվի բնության հետ և կսովորի սիրել ու յուրովի ընկալել այն սեփական դպրոցի պատերի ներքո: Ներքին այնպիսի տարածքների համար, որոնք չեն բացվում դեպի դուրս և չունեն բնական լուսավորության հնարավորություն, բնական լույսի դրական ազդեցությունը պետք է փոխարինել ցերեկային լամպերով՝ համապատասխան ճիշտ ջերմաստիճանով:

Վառ ու պայծառ գույներ: Այսօր կրթական ոլորտի ճարտարապետական լուծումները ավելի շատ գույներ են օգտագործում դասարաններում և ուսումնական տարածքներում: Կարևոր է, որ բազմազան և հնարավորինս վառ լինի գույների պնակը: Գույն օգտագործելը բոլորովին չի նշանակում պարզապես ընտրել պատերի վառ ներկեր: Փորձառու ճարտարապետը, համագործակցելով հոգեբանի, էրգոթերապիստի, էրգոնոմիստի հետ, պետք է ընտրի գույները, վերջիններիս պնակը՝ համադրելով այն երեխաների տարիքային զարգացման, ինչպես նաև դասարանի, միջանցքի հատակի, գորգերի, կահույքի հետ, և, իհարկե, հաշվի առնի դասասենյակի աշակերտների տարիքային առանձնահատկությունները:

Տեխնիկական զինում և նորագույն տեխնիկայի ինտեգրում: Տեխնոլոգիան 21-րդ դարի դպրոցի ցանկացած դասասենյակի կարևոր մասն է: Երեխաները պետք է հնարավորություն ունենան դպրոցի ներսում ազատ օգտագործելու համակարգիչներ, պլանշետներ և այլ շարժական սարքեր՝ սովորելու և ստեղծագործելու համար, ուստի դասարանի դիզայնը պետք է աջակցի տեխնոլոգիական առաջընթացներին, որոնք խթանում են հայտնագործություններն ու փորձարարությունը: Նախագծելով պատ, որը և՛ գրատախտակ է, և՛ նախագծման մակերես, կարելի է հեշտացնել համագործակցությունը և խթանել ստեղծագործական ուսուցումը: Տեխնիկական և ուսումնական պլանի առավելագույն ճկունության համար պետք է հաշվի առնել նաև վարդակների տեղադրությունները և ներկառուցված էլեկտրական վարդակներով ու շարժական սարքերի լիցքավորիչներով գրասեղանների առկայությունը:

Գործնական ուսուցում: Համագործակցության վրա կենտրոնանալու հետ մեկտեղ դպրոցները պետք է փորձարարական և գործնական աշխատանքների համար ընդարձակ միջավայր ունենան: Այս միջավայրը հնարավորություն է տալիս գիտական և տեխնոլոգիական մտածողությամբ աշակերտներին ստեղծագործել, փորձել, արարել, հորինել և կառուցել: Առաջնային պայման է յուրաքանչյուր դպրոցի

համար ունենալ ճկուն լաբորատորիաներ և տարածքներ, որտեղ երեխաները սովորում են անելով (HMC Architects, 2018):

Դպրոցի ձևավորման ընթացքում նաև անհրաժեշտ է.

- Մուտքի պատերին փակցնել տեղային նշաններ, որոնք կօգնեն դպրոց մուտք գործողին արագ կողմնորոշվել և գտնել անհրաժեշտ դասասենյակը: Երբեմն դպրոցները տարածքային առումով լինում են շատ մեծ, և աշակերտները որևէ դասասենյակ գտնելու համար ստիպված են լինում պտտվել տարբեր հարկերում և վատնել ավելորդ էներգիա: Իսկ նման ուղեցույցները կօգնեն կողմնորոշվել արագ և ցուցաբերել ինքնուրույնություն: Ցանկալի է օգտագործել վառ գույներ, սիմվոլներ և թեմատիկ տարրեր, որպեսզի մուտքն ավելի ուշագրավ լինի և հեշտ ճանաչվի երեխաների կողմից:
- Մուտքի պատերին փակցվող տարբեր նշաններն ու զարդարանքներին տալ ինչպես գեղագիտական բնույթ, այնպես էլ ուսումնական նշանակություն: Դրանք կարող են լինել պատկերներ, վահանակներ, մեթոդական բովանդակությամբ ցուցատախտակներ, որոնց ուսուցիչները կանդրադառնան դասի ընթացքում: Նման մոտեցումը համարվում է կարևոր մեթոդական աջակցություն, որը օգնում է երեխային յուրացնել նյութը՝ առանց որևէ հատուկ կամածին ուշադրության: Երեխաները, տեսնելով պատերին այդ բոլոր վահանակները և պաստառները, ենթագիտակցորեն ընկալում են դրանք: Բայց կարևոր է նաև մատուցման կլիպային ձևը, որը ժամանակակից երեխայի տեղեկատվության ընկալման ամենաարդյունավետ ձևերից է:
- Դպրոցի առօրյայի հետ առնչություն ունեցող հայտարարություններ պարունակող տեղեկատվական տախտակները կամ վահանակները տեղակայել դպրոցի մուտքի հատվածում: Նման տեղեկատվական հարթակները ներառում են նաև տարհանման սխեմատիկ պատկերներ, դպրոցի կարգախոսներ, վարքագծի կանոններ և ուսումնական հաստատության համար կարևոր նշանակություն ունեցող այլ նյութեր: Կարևոր է օգտագործել մեծ, հեշտությամբ ընթեռնելի տառատեսակներ և նշաններ, որոնք կարող են հասկանալի լինել բոլոր տարիքի աշակերտների համար: Կարևոր նշանները պետք է փակցված լինեն երեխայի աչքի մակարդակին: Ցանկալի է, որ դպրոցը ունենա իր զինանշանը, խորհրդանիշները կամ կարգախոսը: Վերջիններս նույնպես պետք է լինեն դպրոցի մուտքի հատվածում, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ կարողանա տեսնել, հիշել, կրկնել, արժևորել և հավատարիմ մնալ:
- Չծանրաբեռնել ավելորդ նախշերով և մեծ, տխուր, մռայլ, դժգույն նկարներով, պատկերներով կամ առարկաներով, որոնք նպաստում են սթրեսի ձևավորմանը և դեմոտիվացնում են երեխային: Նման առարկաները հատկապես կարող են մեծ խոչընդոտ դառնալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար և ընկալվել որպես խոչընդոտող, խանգարող գործոն: Օրինակ՝ տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար չափազանց մեծ դեկորը շեղում է հիմնական ուղղությունից և խոչընդոտում տեղաշարժմանը:
- Ստեղծել ֆունկցիոնալ հանգստի գոտիներ՝ հարմարավետ կահույքով՝ տալով երեխային ընտրության հնարավորություն, օրինակ՝ բազմոցներ, սեղաններ, բազկաթոռներ, պուֆեր՝ խմբային և անհատական հանգստի համար: Օրինակ՝ դպրոցի մուտքի կից միջանցքները անհրաժեշտ է հագեցնել սեղանի թենիսով, տարբեր տիպի հատակի խաղերով, ռոբոտների մրցման տարածքներով, ճոճանակներով, համատեղ և անհատական տնային աշխատանք կատարելու պայմաններով և այլն:

3. ԴՊՐՈՑԻ ՄՈՒՏՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Դպրոցը սկսվում է մուտքից: Երբ երեխան մտնում է դպրոց, նրա միտքն ու հոգին պետք է լուսավորվի, նա պետք է ուրախ լինի և ստանա դրական զգացողություններ. միայն դա է նրա ուսումառության նկատմամբ մոտիվացիայի, ցանկության և հետագայում կրթության արժեքը իմանալու և իմաստավորելու կարևորագույն գրավականը:

Պետական խորհրդանիշներ: Դպրոցի նախասրահում՝ գլխավոր մուտքի դիմաց ընկնող պատին, իսկ դրա անհնարինության պարագայում՝ նախասրահի այլ պատի պետք է ամրացված լինի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին ՀՀ օրենքի Հոդված 5-ի կետ 1-ի համաձայն:

Զինանշանի պատկերին կից պետք է տեղադրված լինի Հայաստանի Հանրապետության դրոշը՝ Հայաստանի Հանրապետության դրոշի մասին ՀՀ օրենքի Հոդված 3-ի կետ 5-ի համաձայն: Դրոշն ու զինանշանի պատկերը պետք է համապատասխանեն օրենսդրությամբ սահմանված պայմաններին:

Պետական խորհրդանիշներով ձևավորված պատերին այլ նկարների կամ ուղերձների, էլեկտրոնային էկրանների կամ պաստառների տեղադրումը արգելվում է:

Դպրոցում պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետության օրհներգի մասին ՀՀ օրենքի Հոդված 3-ի կետ 1-ի ը ենթակետի պահանջը, այն է. օրհներգը պետք է հնչի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր հանրակրթական դպրոցներում՝ անկախ սեփականության ձևից, ամեն երկուշաբթի՝ դասերը սկսելուց առաջ:

Օրենսդրության համապատասխան՝ պետական խորհրդանիշների պատշաճ գործածումը և պահպանումը պետք է ներառված լինի դպրոցի ներքին կարգապահական կանոններում, արտացոլված լինի համապատասխան աշխատակիցների պաշտոնային նկարագրերում:

Դպրոցի մուտքի պատը կարող է ունենալ նաև անկյուն, որտեղ փակցված են դպրոցի կանոնակարգը, համայնքի բոլոր շահառուների իրավունքներն ու պարտականությունները, դասացուցակ, հայտարարությունների վահանակ, որը նվիրված կլինի դպրոցի առօրյային և ծրագրերին, արտակարգ իրավիճակներին դիմակայելու կանոններ և տարհանման սխեմաներ (յուրաքանչյուր հարկում):

Գլխավոր մուտքի դիմաց ընկած նախասրահում՝ պետական խորհրդանիշներին կից պատին, եթե դպրոցը անվանակոչված է, ապա պետք է տեղադրված լինի այն գործչի նկարը, որի անունով անվանակոչված է դպրոցը, ինչպես նաև կարճ տեղեկատվություն տվյալ գործչի, անվանակոչման տարեթվի ու համատեքստի մասին:

Հնարավորության դեպքում կարելի է կահավորել մուտքը՝ ապահովելով հարմարավետ սպասասրահի, փոքր գրադարանի, հանդերձասրահի առկայությունը: Դպրոցը կարող է ունենալ նաև առաջարկությունների, կարծիքների արկղ կամ վահանակ, դպրոցի լոգո և կարգախոս, ինչպես նաև կրթության մասին ուղղված թևավոր խոսքերի ցուցանակներ:

4. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋԱՆՑՔՆԵՐԻ ՊԱՏԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ցուցանակների տեղակայում: Դպրոցի ներսում յուրաքանչյուր սենյակի կամ դահլիճի դռան կողքին կարող է տեսանելի բարձրության վրա ամրացված լինի ցուցանակ, որտեղ նշված կլինի. դասարանի պարագայում՝ որ դասարանի դասասենյակն է, ինչպես նաև դասվարի կամ դասղեկի անունը, օրինակ՝ 2-րդ «ա» դասարան, դասվար՝ Գ. Բաղդասարյան: Դահլիճների, ճաշարանի, գրադարանի և այլ սենյակների ցուցանակները պետք է պարունակեն դրանց անվանումը, օրինակ՝ մարզադահլիճ, հանդիսությունների սրահ, քիմիայի լաբորատորիա և այլն:

Գլխավոր մուտքի դիմաց ընկած նախասրահից դուրս եկող միջանցքներից մեկը կարող է ձևավորված լինի տվյալ դպրոցի տեղակայման բնակավայրի բնապատկերներով և տեսարժան վայրերով, որոնք կարող են ուղեկցվել դրանց նկարագրությունը պարունակող կարճ տեքստով: Կարող

են օգտագործվել նաև տվյալ բնապատկերների կամ տեսարժան վայրերի մասին պատմող հոլովակներին հղող QR տեխնոլոգիաներ: Այս պարագայում դպրոցի մանկավարժական խորհուրդը պետք է անպայման նախապես քննարկի և երաշխավորի այդ հոլովակների գործածությունը: Հոլովակների պարբերաբար ստուգումը հանդիսանում է դպրոցի էլեկտրոնային դասավանդման մասնագետի պարտավորությունը: Ցանկալի է խրախուսել երեխաներին, որ նախագծային աշխատանքների ընթացքում կազմեն իրենց բնակավայրի տեսարժան վայրերի, բնապատկերների վերաբերյալ հոլովակներ, և նման տեխնոլոգիաների կիրառության պարագայում կարելի է օգտագործել երեխաների աշխատանքները: Ընդ որում, բնապատկերներին անդրադառնալիս ցանկալի է, որ դրանք պարունակեն տեղեկատվություն կլիմայի փոփոխությունների վերաբերյալ և ընդգծեն բնական միջավայրի պահպանման անհրաժեշտությունը: Եթե խոսքը քաղաքային բնակավայրի մասին է, ապա ցանկալի է նաև քաղաքային այգիները պատկերող լուսանկարների տեղադրումը:

Առկայության դեպքում կարող է գործածվել բնապատկերների կամ տեսարժան վայրերի՝ տարբեր տասնամյակների կամ դարաշրջանների պատկերներ, որոնք կարող են ուղեկցվել նաև համապատասխան պատմական համատեքստի և ժամանակաշրջանի կարճ նկարագրությամբ նույն եղանակներով, ինչ նկարագրված է վերևում:

Միջանցքում կարող են լինել նաև շարժական վահանակներ, որոնց վրա կտեղադրվեն դպրոցի ընտրությամբ որևէ թեմային վերաբերող նյութեր, թարմացվող «խոսող պատեր»՝ նվիրված տարբեր առարկայական թեմաների (օրինակ կարելի է առանձնացնել նաև պատ, որի վրա երեխաները կարող են նկարել ըստ նախապես առաջադրված թեմայի, որը կխթանի սովորողների ստեղծագործական և քննադատական մտածողությունը), դպրոցի պատմությունը, հիմնական արժեքներն ու ձեռքբերումները: Կարևոր է սահմանել վահանակներում տեղադրվող նյութերի ու թեմաների ընտրության նպատակները և հստակ ձևակերպել դրանց բովանդակությունը, որոնք պետք է նպաստեն սովորողների թե՛ ուսումնառությանը, թե՛ արժեհամակարգի ու աշխարհայացքի ձևավորմանը, և թե՛ բարեվարքության դրսևորմանը:

Դեպի մարզադահլիճ տանող միջանցքը առկայության դեպքում կարող է ձևավորված լինել ֆիզիկական առողջ ակտիվությունը խրախուսող պաստառներով, կարող է ներկայացնել ՀՀ քաղաքացի հանդիսացող, բարձր նվաճումներ ունեցող մարզիկների՝ իրենց հաղթանակի ժամանակ, որոնց թվում անպայման պետք է ներառված լինեն հաշմանդամություն ունեցող մարզիկների, ինչպես նաև կին մարզիկների նկարներ: Մարզիկների նկարները ցանկալի է ուղեկցել նրանց խոսքից մեջբերումներով, որոնք կվերաբերեն մարզման, առողջ ապրելակերպի կարևորությանը:

Ցանկալի է ունենալ նաև առանձին հատված դպրոցի տարբեր մարզական թիմերի խաղերից, տարբեր մրցաշարերին մասնակցություններից, ինչպես օրինակ՝ սպորտլանդիաները, գիմնազիադաները, տարբեր մարզաձևերի սիրողական առաջնությունները, Վարչապետի գավաթի մրցաշարերը: Անհրաժեշտ է նախատեսել տեղեկատվական հատված, որտեղ պարբերաբար կտեղակայվի դպրոցում գործող սպորտային խմբակների, տվյալ բնակավայրում գործող մարզադպրոցների, առաջիկա սպասվող մարզական միջոցառումների մասին տեղեկատվությունը և պարբերաբար կթարմացվի ըստ անհրաժեշտության, կարող են օգտագործվել նաև QR տեխնոլոգիաները՝ վերևում նկարագրված եղանակով:

Դեպի ճաշարան տանող միջանցքը առկայության դեպքում կարող է ձևավորված լինել առողջ սնվելու, առողջ ապրելակերպի կարևորությունը ընդգծող պաստառներով: Դրանք պետք է համահունչ լինեն «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակի ուսումնական նյութերին, կարող են օգտագործվել նաև QR տեխնոլոգիաները՝ վերևում նկարագրված եղանակով:

Դեպի հանդիսությունների սրահ տանող միջանցքը առկայության դեպքում կարող է ձևավորված լինել տվյալ դպրոցում իրականացված միջոցառումների, համերգների, բեմադրությունների լուսանկարներով, որոնք պարբերաբար կարող են փոխվել և թարմացվել, ընդ որում, լուսանկարները պետք է ուղեկցվեն

կարճ նկարագրություններով: Այս միջանցքի պատերին կարող են տեղակայված լինել նաև ՀՀ քաղաքացի հանդիսացող մշակույթի և արվեստի հայտնի գործիչների կամ նրանց արվեստի գործերի պատկերներ՝ համապատասխան նկարագրություններով:

Անհրաժեշտ է ունենալ տեղեկատվական հատված, որտեղ կպարունակվի տեղեկատվություն դպրոցում գործող արվեստի խմբակների, մոտակայքում տեղակայված արվեստի, երաժշտական, գեղարվեստի դպրոցների, ինչպես նաև առաջիկայում տեղի ունենալիք մշակութային միջոցառումների մասին, անհրաժեշտ է անպայման ներառել նաև տեղեկատվություն պետության կողմից դպրոցականների համար իրականացվող կրթամշակութային ծրագրերի և դրանց դիմելու պայմանների, ժամանակացույցի մասին, ինչպես՝ «Քո արվեստը դպրոցում» և այլ ծրագրեր, անհրաժեշտ է պարզ և մատչելի տեղեկատվություն տեղադրել նաև դպրոցական բաժանորդային համակարգի մասին: Կարող են օգտագործվել նաև QR տեխնոլոգիաները՝ վերևում նկարագրված եղանակով:

Դեպի գրադարան տանող միջանցքը առկայության դեպքում կարող է ձևավորված լինել դպրոցական ծրագրում ընդգրկված գրողների ստեղծագործություններից մեջբերումներով, վերջիններիս նկարներով: Ընդ որում, պետք է ընդգրկել թե՛ հայ, թե՛ այլազգի գրողների, իսկ ստեղծագործություններից մեջբերումները պետք է համահունչ լինեն հանրակրթության պետական չափորոշչի ուղերձներին: Կարող են օգտագործվել նաև QR տեխնոլոգիաները՝ վերևում նկարագրված եղանակով:

Դեպի տարրական դասարաններ տանող միջանցքի պատերից մեկը պետք է լինի ցուցահանդեսային պատ, որտեղ պարբերաբար կցուցադրվեն տարրական դասարանների երեխաների նկարած նկարները կամ պատրաստած ձեռքի աշխատանքները: Դրանք պետք է պարբերաբար փոխվեն: Կարող են որոշակի ժամանակագրությամբ ցուցադրվել դասարաններից մեկի, այնուհետև՝ մյուսի աշխատանքները: Աշխատանքներին կից անպայման պետք է լինի հեղինակի անունը, ցանկալի է նաև՝ լուսանկարը, ինչպես նաև ստեղծագործության անունը: Կարող են լինել թեմատիկ ցուցահանդեսներ՝ տարվա եղանակներին, որոշակի տոների կամ այլ իրադարձությունների նվիրված: Պատից հանվելուց հետո տվյալ երեխայի աշխատանքը պետք է պահվի վերջինիս թղթապանակում:

Տարրական դասարանների միջանցքային հատվածում կարելի է ունենալ նաև բազմապատկման աղյուսակը, բանաձևերը, ուղղագրական դժվարություն ունեցող բառերը ներառող շարժական պաստառներ: Օրինակ՝ բազմապատկման աղյուսակը կարելի է պատկերել նաև աստիճանների վրա:

Տարրական դասարանների միջանցքային հատվածում անհրաժեշտ է նախատեսել **բույսերի տեղակայման** հնարավորություն: Ընդ որում, բույսերի խնամքը պետք է իրականացնել սովորողների հետ՝ դա դարձնելով կրթական գործընթացի մաս: Հնարավորության դեպքում **բույսեր կամ կանաչ անկյուններ պետք է ունենալ առանձին դասարաններում**՝ նույն սկզբունքով, որպեսզի դրանց խնամքով զբաղվեն սովորողները՝ դասվարի կամ դասղեկի ուղղորդմամբ, նաև սովորելով ու ճանաչելով առանձին բույսերը, դրանց խնամքի ձևերը:

Չորրորդ և ավելի բարձր դասարանների պարագայում հարակից միջանցքների պատերը ցանկալի է օգտագործել գիտական նվաճումների և հայտնագործությունների մասին պատմող, տարբեր մասնագիտությունների կարևորությունը ցույց տվող պաստառներով: Անհրաժեշտ է տեղակայել նաև տեղեկատվական հատված, որտեղ ներառված կլինի տեղեկատվություն գիտության փառատոնի, օլիմպիադաների, դրանց մասնակցության պայմանների, համապատասխան խմբակների մասին: Կարող են օգտագործվել նաև QR տեխնոլոգիաները՝ վերևում նկարագրված եղանակով:

Անհրաժեշտ է ունենալ նաև պաստառ՝ **դպրոցում բուլինգի երևույթի և դրա դեմ պայքարի մասին**, որտեղ կնշվի տեղեկատվություն այն մասին, թե նման իրավիճակում հայտնվելու դեպքում որ կառույցին կարելի է դիմել, գործող թեժ գծի մասին: Պաստառը կարող է տեղակայված լինել դպրոցի հոգեբանի սենյակին կից հատվածում: Կարող են օգտագործվել նաև QR տեխնոլոգիաները՝ վերևում նկարագրված եղանակով:

5. ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Դասարանի պատերի **առնվազն 40 տոկոսը** պետք է ազատ թողնել: Լաբորատորիաները և կոնկրետ առարկայի ուսուցանման համար նախատեսված դասասենյակները պետք է ձևավորված լինեն **բացառապես տվյալ առարկայի լաբորատորիայի համար դիդակտիկ նյութ հանդիսացող պաստառներով,** որոնք ցանկալի է, որ երաշխավորված լինեն կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից: Լաբորատորիաներում պետք է պարտադիր լինեն անվտանգության պահպանման կանոնները ներկայացնող պաստառներ:

Դասարանների, առարկայական կաբինետների պատերին կարող են փակցվել նաև դասի մասնակցության և ընդհանուր վարքականոններ, առարկայական անկյուններ, որտեղ կտեղադրվեն սովորողների կողմից կատարված աշխատանքները տվյալ առարկայի թեմաների վերաբերյալ, գնահատման չափանիշներ:

ՆԶՊ-ի կաբինետում անհրաժեշտ է նաև ունենալ արտակարգ իրավիճակներին դիմակայելու կանոնների, առաջին օգնության ցուցաբերման, տեղանքում կողմնորոշման պաստառներ, ինչպես նաև ՆԶՊ առարկային վերաբերող անհրաժեշտ նյութեր և ռեսուրսներ:

Տարրական և հիմնական դասարանների դասասենյակների ձևավորման ժամանակ պետք է նախատեսել **պարտադիր հատված երեխաների աշխատանքների կամ դասարանի համատեղ միջոցառումների ներկայացման համար**: Դասարանում կարող են տեղակայվել նաև ուսուցանվող առարկաների հիմնական տեղեկությունները պարունակող պաստառներ, ինչպես օրինակ՝ այբուբենը, բազմապատկման աղյուսակը:

Ցանկալի է բոլոր դասարաններում ունենալ **էլեկտրոնային էկրաններ, ռեսուրսներ՝ դասերի արդյունավետ ներկայացման համար** կամ շարժական պաստառներ՝ կոնկրետ թեման բացատրելու համար, որոնք դասաժամի ընթացքում կներկայացվեն և այնուհետև կհեռացվեն՝ չհանդիսանալով պատերի ձևավորման մշտական բաղադրիչ:

6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. HMC Architects. 2018. Designing the 21st Century Classroom: 6 Top Considerations: https://hmcarchitects.com/news/designing-the-21st-century-classroom-6-top-considerations-2018-08-24/
2. Medium. 2024. Reflections on Finnish education psychology and experimental classroom setting. https://medium.com/@skment/reflections-on-finnish-education-psychology-and-experimental-classroom-setting-a28b5ed8386e
3. Meteor Education. 2024. 5 Key Elements of 21st Century Classroom Design: https://meteoreducation.com/five-essential-elements-for-engaging-learning-spaces/
4. UNICEF. 2006. Child friendly schools. Manual. https://www.unicef.org/media/66486/file/Child-Friendly-Schools-Manual.pdf

Ծանոթություն: Ուղեցույցի նկարները վերցված են համացանցից: